

ԼԳԵՓ ՀԱՍՍՅՆՔԻ
ԱՐՏԱԳԱԼՈՒՄՏԻ ԻՐԱՎԻՃԱԿԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԿԳԹ Կարեն Բաղայանի ընդհանուր
խմբագրությամբ

Արտագալուստը մարդու սեռական կամ գենդերային փոքրամասնությանն իր պատկանելիության ընդունելու ինքնակամ փաստն է և այս կամ այն չափով դրա բացահայտումն է ինքն իրեն և շրջապատող մարդկանց համար՝ ծնողներ, մերձավորներ, բարեկամներ, դասընկերներ, համակուրսեցիներ, ընկերներ, աշխատանքային գործընկերներ և այլոք: Արտագալուստ տերմինը հիմնականում կիրառվում է լեսբուհիների, գեյերի, երկսեռականների, փոխսեռականների և փոխգենդերների (հապավումը՝ ԼԳԵՓՓ) նկատմամբ, ովքեր շրջապատից չեն թաքցնում իրենց ոչ ավանդական սեռական կողմնորոշվածությունը կամ հոգեբանական սեռի անհամապատասխանությունը կենսաբանականին: «Արտագալուստ» տերմինը փոխառնված է անգլերեն «coming out of the closet» արտահայտությունից, որը բառացիորեն թարգմանվում է «դուրս գալ նկուղից» և նշանակում է «չթաքնվել», «բացահայտվել»: Երբեմն հայերենում կիրառվում է նաև «քամինգ-աութ» տերմինը:

Արտագալուստի ընթացքը: Համաձայն Ա. Էրիքսոնի՝ մարդն իր հոգեկան զարգացման ընթացքում անցնում է ութ հիմնական փուլերով՝ լուծելով որոշակի հոգեբանական խնդիրներ: Ըստ նրա տեսության, հոգեպես առողջ մարդու համար շատ կարևոր է սեռականության ներգրավումը ամբողջական «Ես»-ի կերպարի մեջ: Միևնույն ժամանակ Էրիքսոնը պնդում է, որ այդ ձևավորումն անձի և հասարակության փոխազդեցության համալիր գործըն-

թաց է: Հիմնվելով Էրիքսոնի դրույթների վրա՝ հոգեթե-
րապետ Դ. Դևիսը եզրակացնում է. «Քանի որ նույնասե-
ռականների նույնականացման ձևավորումը նույնավախ
հասարակությունում ընթանում է այլ կերպ, քան տարա-
սեռականների մոտ, ապա նրանց հոգեկան զարգացումը
նշանակում է պիտակավորված սեռականության ներգրա-
վում իրենց «Ես»-ի կերպարի մեջ»: 1970-ականներին ու-
սումնասիրողների կողմից ձևակերպվել են արտագալուս-
տի ընթացքի տարբեր հոգեբանական ձևաչափեր, որոն-
ցից առավել լայն տարածում գտավ ամերիկացի սոցիոլոգ
Ռ. Տրոյդենի կողմից առաջարկված տեսությունն իր չորս
հիմնական փուլերով՝

-Կանխագգացում. մյուսներից տարբերվելու զգացողու-
թյունն է, որն ի հայտ է գալիս մինչ սեռահասունությունը,

-Կասկած տարասեռական նույնականացման հանդեպ,
որն արտահայտվում է դեռահասունության տարիքում,

-Սեփական սեռականության պատկանելիությանը ոչ
ավանդական սեռական կողմնորոշվածությանը կամ գեն-
դերային նույնականացումն ընդունել է, որին հնարավոր է
և չհասնել՝ հաշվի առնելով հասարակությունում առկա թշ-
նամական դիրքորոշումները,

-Ինքնանույնականացում՝ որպես սեռական փոքրա-
մասնության ներկայացուցիչ, սեռականության և հուզակա-
նության հետ կապի հաստատում, սեփական սեռականու-
թյան ներգրավումը «Ես»-ի ամբողջական կերպարի մեջ:

Քանի որ սեռական կողմնորոշվածության և գենդերա-
յին նույնականացման՝ ՍԿԳՆ հստակ նախադրյալները

բացահայտված չեն, ապա վիճարկելի են մնում նաև ար-
տագալուստի գործընթացը և դրա տեսական հիմնավո-
րումները: Սակայն բոլոր առկա վարկածները համընկնում
են նրանով, որ արտագալուստի գործընթացը չի կարող ըն-
թանալ գծային կերպով, քանի որ մարդը միաժամանակ
կարող է լուծել մի քանի հոգեբանական խնդիրներ, որոնք
վերաբերում են այդ գործընթացի տարբեր փուլերին:

Արտագալուստի պատմությունը: Առաջին անգամ
արտագալուստի հասկացությունը առաջ է քաշվել 1869թ.
գերմանացի փաստաբան, լրագրող և սեռական փոքրա-
մասնությունների իրավունքների պաշտպան Կարլ Հեն-
րիխ Ուլրիխսի կողմից, որպես իրավունքների հավասա-
րեցման տարատեսակ: Նա կարծում էր, որ սեռական
փոքրամասնությունների գաղտնի գոյատևումը հնարավո-
րություն չէր տալիս ազդել հասարակության կարծիքի
վրա և կոչ էր անում նույնասեռականներին ապրել ավելի
բացահայտ՝ դիմելով քամինգ-աութի:

Հայտնի մարդկանցից առաջինը, ով արտագալուստ կա-
տարեց, ամերիկացի գրող Ռ. Դունկան էր: 1941թ. թվականին
հայտարարելով իր սեռական կողմնորոշվածության մասին՝
նա հեռացվեց բանակից: 1944թ. «Politics» ամսագրում
տպագրված իր հոդվածում նա հայտարարեց, որ նույնասե-
ռականները ճնշված փոքրամասնություն են:

1951թ. Դ. Քորին հրատարակեց «Նույնասեռականը Ամե-
րիկայում» աշխատանքը, որտեղ ընթերցողի հետ կիսվում է
իր ասյրումներով. «Հասարակությունն ինձ տվեց դիմակ, որը

ես ստիպված եմ կրել մշտապես... Ուր էլ գնամ, ես դեր եմ խաղում...»: Նրա զգացումների անկեղծ նկարագրությունը խթան հանդիսացավ, որպեսզի նույնասեռականներն իրենց գիտակցեն որպես հասարակության անբնական մաս:

1950-ականների վերջում «քամինգ-աութ» տերմինը նույնասեռականների բառապաշարից փոխառնվեց և սկսեց կիրառվել գիտական գրականության մեջ: Առաջինը դա արեց ամերիկացի հոգեբան Է. Հուքերը, ով հետազոտությունների մի ամբողջ շարք նվիրել է նույնասեռականների համայնքների ուսումնասիրմանը: Համաձայն Հուքերի՝ շատ հաճախ, երբ մարդն արդեն գիտակցել է իր նույնասեռական լինելը, սակայն հասարակության կարծիքի ճնշման տակ շարունակում է պայքարել այդ մտքի հետ, արտագալուստի է դիմում միայն այն ժամանակ, երբ առաջին անգամ իրեն որպես նույնասեռական է նույնականացնում՝ հայտնվելով նույնասեռականների հավաքատեղիում:

1960-ականներին Ֆրենկ Կամենի անունով մի մարդ դարձավ առաջին բացահայտ նույնասեռական ակտիվիստը, ով առաջնորդում էր ԱՄՆ-ում նույնասեռականների իրավունքների պայքարը: Կամենին հեռացրել էին աստղաբանի աշխատանքից նույնասեռական վարքի համար: Նա բացահայտորեն բողոքարկում էր իրեն գործից ազատելը և գործը հասցրեց մինչև ԱՄՆ-ի Գերագույն Դատարան: Կամենին կոչ էր անում նույնասեռականներին ոչ թե պաշտպանվել, այլ ակտիվ հրապարակային գործողությունների դիմել: Կամենիի կարգախոսն էր՝ «Նույնասեռական լինելը լավ է» («Gay is Good»):

Արտագալուստի հետազոտության արդյունքները

Հետազոտության նպատակը

Պարզել Հայաստանում ԼԳԵՓ համայնքի արտագալուստի իրավիճակը:

Թիրախային խումբ

Հայաստանում ԼԳԵՓ համայնքի նրկայացուցիչները

Տարիքային խումբ

18 - 49 տարեկան

Հարցվողների թիվը

215

Հետազոտման գործիքը

Անանուն հարցում հարցաթերթիկի կիրառմամբ:

Հետազոտության արդյունքները: Հետազոտությունը բաղկացած է երկու հիմնական մասերից: Առաջին մասի նպատակն էր պարզել հարցվողների անձնային և որոշ ժողովրդագրական տվյալներ: Երկրորդ մասը նվիրված է արտագալուստի իրավիճակի ընդհանուր վերլուծական հետազոտությանը:

Հարցվողների 41,4 %-ն իրենց կենսաբանական սեռը բնորոշել են որպես իգական, 54,0 %-ը արական, իսկ 4,7%-ը չեն պատասխանել այդ հարցին (Աղյուսակ 1):

		Քանակը	Տոկոս	Վավերական տոկոս
Վավերական	Իգական	89	41,4	43,4
	Արական	116	54,0	56,6
	Ընդամենը	205	95,3	100,0
Բացթողնված	0	10	4,7	
	Ընդամենը	215	100,0	

Աղյուսակ 1

Հարցման մասնակիցների ՄԿԳՆ բերված է աղյուսակ 2-ում:

		Քանակը	Տոկոս	Վավերական տոկոս
Վավերական	Գեյ	56	26,0	28,6
	Լեսբուհի	26	12,1	13,3
	Երկսեռական	93	43,3	47,4
	Փոխգեղորդեր	21	9,8	10,7
	Ընդամենը	196	91,2	100,0
Բացթողնված		19	8,8	
	Ընդամենը	215	100,0	

Աղյուսակ 2


Աղյուսակ 2-ից երևում է, որ 19 հոգի, ինչը կազմում է հարցվողների 8,8%-ը, չեն պատասխանել, թե ինչ ՄԿԳՆ ունեն: Հաշվի առնելով այդ փաստը՝ հաջորդ` 3-րդ աղյուսակում կենսաբանական սեռի և ՄԿԳՆ համեմատական կարելի է տանել միայն հարցվողների 91,2%-ի համար: Այսպիսով, իգական սեռի ներկայացուցիչներից 26-ը պա-

տասխանել են, որ լեսբուհի են, 41-ը՝ երկսեռական, 12-ը՝ փոխգեղորդեր: Արական սեռի ներկայացուցիչներից 56-ը պատասխանել են, որ գեյ են, 44-ը՝ երկսեռական, և 7-ը՝ փոխգեղորդեր: 29 համադրություն անվավեր են:

(Աղյուսակ 3, պատկեր 1)

Սեռական կողմնորոշվածություն						
Սեռ		Գեյ	Լեսբուհի	Երկսեռական	Փոխգեղորդեր	Ընդամենը
Իգական		0	26	41	12	79
Արական		56	0	44	7	107
Ընդամենը		56	26	85	19	186

Աղյուսակ 3



Պատկեր 1

Հարցվողների 100%-ը հստակ պատասխանել է բնակավայրի վերաբերյալ մեր ժողովրդագրական հարցադրմանը: Ըստ այդմ՝ 76,7% -ը բնակվում է մայրաքաղաքում, 20%-ը՝ այլ քաղաքումներում, և միայն 3,3%-ը՝ գյուղերում: (Աղյուսակ 4): Քանի որ սեռական կողմնորոշվածության վերաբերյալ հարցին 19 հարցվող չեն պատասխանել, համեմատական դիտարկումներ ՄԿԳՆ և բնակավայրի միջև կարող ենք անցկացնել 91,2%-ի մոտ:

		Բնակավայր			
		Մայրաքաղաք	Քաղաք	Գյուղ	Ընդամենը
ՄԿԳՆ	Գեյ	39	15	2	56
	Լեսբուհի	18	8	0	26
	Երկսեռական	76	15	2	93
	Փոխգենդեր	18	0	3	21
	Ընդամենը	151	38	7	196

Աղյուսակ 4

Հարցման մասնակիցների կրթության մակարդակը պարզելու համար հարցաթերթիկում ներառվել է համապատասխան հարց: Կրթության հետ կապված հարցին խուսափել են պատասխանել հարցվողներից 3-ը: Աղյուսակ 5-ից երևում է, որ հարցվողների մեծամասնությունը՝ 57,7%-ը, բարձրագույն կրթություն ունեն, 33,0%-ը՝ միջնակարգ, 7,4%-ը՝ թերի միջնակարգ և 1 անձ՝ տարրական (Աղյուսակ 5): Որպեսզի կարողանանք համեմատել, թե ինչ կրթություն ունեն տարբեր ՄԿԳՆ ունեցող հարցվողները, կարող ենք դիտարկել միայն պատասխանների 89,8%-ը, քանի որ հարցվողներից ոմանք խուսափել են

պատասխանել, թե ինչ ՄԿԳՆ ունեն, ոմանք էլ տեղեկություն չեն ցանկացել հայտնել իրենց կրթության վերաբերյալ: Աղյուսակ 5-ից նկատվում է մի հետաքրքիր դիտարկում. բացի լեսբուհիներից, մյուսների մոտ բարձրագույն կրթությունը համեմատաբար գերակայում է, իսկ լեսբուհիների մեծամասնությունն ունի միջնակարգ կրթություն: Հարկ է նշել, որ հարցվողներից միակը, ով չունի նույնիսկ ութամյա կրթություն, գեյ է:

		Կրթության				
		Թերի	Թերի միջնակարգ	Միջնակարգ	Բարձրագույն	Ընդամենը
ՄԿԳՆ	Գեյ	1	0	15	37	53
	Լեսբուհի	0	3	15	8	26
	Երկսեռական	0	10	33	50	93
	Փոխգենդեր	0	3	2	16	21
	Ընդամենը	1	16	65	111	193

Աղյուսակ 5

Հարցվողների աշխատանքային զբաղվածությունը պարզելու համար նրանց տրվել է հարց աշխատանքի վերաբերյալ: Ըստ այդմ, հարցվողներից աշխատում է 55,3%-ը, չի աշխատում 33,5%-ը և գործազուրկ է 11,2%-ը (Աղյուսակ 6): Փորձելով ՄԿԳՆ և զբաղվածության հետ համեմատական դիտարկում կատարել՝ կստանանք հետևյալ պատկերը. երկու հարցերին պատասխանել է հարցվողների 91,2%-ը: Աղյուսակ 6-ից երևում է, որ հիմնականում աշխատանքային զբաղվածություն ունեն երկսեռականները և գեյերը: Մեծ թիվ է կազմում գործազուրկությունը լեսբուհիների շրջանում:

		Աշխատանքային զբաղվածություն			
		Աշխատում են	Չեն աշխատում	Գործազուրկ են	Ընդամենը
ՍԿԳՆ	Գեյ	36	15	5	56
	Լեսբուհի	6	9	11	26
	Երկսեռական	58	29	6	93
	Փոխգենդեր	4	15	2	21
	Ընդամենը	104	68	24	196

Աղյուսակ 6

Հետաքրքրական է դիտարկել նաև հարցվողների ընտանեկան կարգավիճակն՝ այն համեմատելով ՍԿԳՆ հետ (երկու հարցերին պատասխանել է հարցվողների 91,2%-ը): Ջարմանալի չէ, որ 54 գեյեր ամուսնացած չեն, և միայն երկուսն են, որ գտնվում են ամուսնացածի կարգավիճակում: Լեսբուհիների մոտ պատկերն այլ է՝ 5 լեսբուհի ամուսնացած են, 16-ը՝ ոչ, իսկ 5-ն ամուսնալուծված են: Ինչ վերաբերում է երկսեռականներին, ապա, համեմատած այլ սեռական կողմնորոշվածություն ունեցողների, մեծամասնություն են կազմում ամուսնացածների ցանկում՝ 14 անձ, 71-ը չամուսնացած են և 3-ը՝ ամուսնալուծված: Փոխգենդերներից 2-ն ամուսնացած են, իսկ 19-ը՝ ոչ: Այսպիսով, հարցվողների միջև ամուսնացածների ընդհանուր թիվը հասնում է 23-ի, չամուսնացածներինը՝ 160-ի, ամուսնալուծվածներինը՝ 8-ի, իսկ 5-ն՝ այրի է կամ ամուրի (Աղյուսակ 7):

		Ընտանեկան կարգավիճակ				
		Ամուսնացած	Չամուսնացած	Բաժանված	Ամուրի/Այրի	Ընդամենը
ՍԿԳՆ	Գեյ	2	54	0	0	56
	Լեսբուհի	5	16	5	0	26
	Երկսեռական	14	71	3	5	93
	Փոխգենդեր	2	19	0	0	21
	Ընդամենը	23	160	8	5	196

Աղյուսակ 7

Ինչ վերաբերում է հարցվողների ծնողների ընտանեկան կարգավիճակին, ապա պատկերն այսպիսին է՝ 43 գեյերի ծնողներն ամուսնացած են, 3-ի ծնողները՝ չամուսնացած, 6-ի ծնողները՝ ամուսնալուծված, և 4-ի ծնողներն՝ այրի են կամ ամուրի: Լեսբուհիներից 14-ի ծնողները ամուսնացած են, 9-ը՝ ամուսնալուծված: Երկսեռանիներից 56-ի ծնողներն ամուսնացած են, 21-ը՝ ամուսնալուծված, և 3-ը՝ այրի կամ ամուրի: Փոխգենդերներից միայն 4-ի ծնողներն են ամուսնացած, 15-ը ամուսնալուծված են և 2-ը՝ այրի կամ ամուրի (Աղյուսակ 8):

		Ծնողների ընտանեկան կարգավիճակը				
		Ամուսնացած	Չամուսնացած	Ամուսնալուծված	Ամուրի/Այրի	Ընդամենը
ՍԿԳՆ	Գեյ	43	3	6	4	56
	Լեսբուհի	14	0	9	0	23
	Երկսեռական	56	0	21	3	80
	Փոխգենդեր	4	0	15	2	21
	Ընդամենը	117	3	51	9	180

Աղյուսակ 8

Հաջորդ հարցադրման նպատակն է եղել պարզել, թե որ տարիքում են հարցման մասնակիցներն առաջին անգամ սկսել մտածել իրենց ՄԿԳՆ վերաբերյալ: Հարցին պատասխանել է հարցվողների 91,2%-ը: Հարցման մասնակիցներին բաժանել ենք չորս տարիքային խմբերի, որոնք հիմնականում բնորոշում են այդ տարիքի զարգացման առանձնահատկությունները: Ընդհանուր հարցվողներից 64 մարդ (31-ը՝ գեյ, 13-ը՝ լեսբուհի, 13-ը՝ երկսեռական և 7-ը՝ փոխգենդեր) պատասխանել է, որ ՄԿԳՆ վերաբերյալ սկսել են կասկածել 1-10 տարեկանում: Հարցվողներից 51-ը (14-ը՝ գեյ, 3-ը՝ լեսբուհի, 27-ը՝ երկսեռական և 7-ը՝ փոխգենդեր) պատասխանել է, որ կասկածել է 11-14 տարեկանում: 15-18 տարիքային խմբի մեջ են մտնում հարցվողներից 65-ը, որոնցից 7-ը գեյ են, 10-ը՝ լեսբուհի, 41-ը՝ երկսեռական և 7-ը՝ փոխգենդեր: Հարցվողներից միայն 16-ն են (4-ը՝ գեյ, 12-ը՝ երկսեռական) իրենց ՄԿԳՆ վերաբերյալ կասկածել 19-ը տարեկանից հետո

	ՄԿԳՆ				
	Գեյ	Լեսբուհի	Երկսեռական	Փոխգենդեր	Ընդամենը
0 -10	31	13	13	7	64
11 -14	14	3	27	7	51
15 - 18	7	10	41	7	65
19 - բարձր	4	0	12	0	16
Ընդամենը	56	26	93	21	196

(Աղյուսակ 9):
Աղյուսակ 9

Հաջորդ հարցի նպատակն էր պարզել, թե որքան ժամանակ պահանջվեց հարցվողներից, որպեսզի ընդունեն իրենց ՄԿԳՆ-ը: Հարցվողների 31,2%-ին պահանջվել է 2-ից 5 տարի, որպեսզի գիտակցեն և ընդունեն իրենց ՄԿԳՆ, 17,7%-ն ընդունել է 1-3 ամսվա ընթացքում, իսկ 15,3 %-ին անհրաժեշտ է եղել մոտ 1 տարի: Հարցվողների 4,7%-ը, այսինքն՝ մասնակիցներից 10-ը, մինչ այժմ չի գիտակցում, թե ինչ ՄԿԳՆ ունի, իսկ 9 անձանց հարկավոր է եղել 5 տարուց ավել ժամանակ: Ստորև բերված աղյուսակում երևում է, թե տարբեր ՄԿԳՆ ունեցող հարցվողները, ինչ ժամանակահատվածում են գիտակցել իրենց ՄԿԳՆ (Աղյուսակ 10):


	ՄԿԳՆ				
	Գեյ	Լեսբուհի	Երկսեռական	Փոխգենդեր	Ընդամենը
2 - 5 տարի	20	10	31	4	65
1-3 ամիս	11	3	17	7	38
ավելի քան 5 տարի	6	0	3	0	9
մեկ տարի	7	10	16	0	33
չեն գիտակցել	5	0	5	0	10
անմիջապես	7	3	21	10	41
Ընդամենը	56	26	93	21	196

Աղյուսակ 10

Արտագալուստի գործընթացին նպաստող կարևոր գործոններից է տեղեկատվությունը ՄԿԳՆ վերաբերյալ: Որպես տեղեկատվական աղբյուր, որ ինչ-որ կերպ օգնել է հարցվողներին իրենց ՄԿԳՆ ընդունման համար, հարցվողները նշել են տարբեր պատասխաններ: Պատկերը հետևյալն է (Պատկեր 2):

Ինտերնետ - 18,3%
 Գրականություն - 15,3%
 Լ.Գ.Ե.Փ համայնք - 15,0%
 Ընկերների համայնքից - 14,4%
 Ընկերներ - 12,0%
 ՁԼՄ - 12,0%
 Բժիշկ կամ հոգեբան - 3,5%
 Աշխատակիցներ - 3,5%
 ՀԿ-ներ - 3,0%
 Այլ - 3,0%

(Պատկեր 2)



Այն հարցին, թե երբ հարցվողների ընտանիքն իմացավ իրենց ՍԿԳՆ վերաբերյալ, պատասխանել են 204 մասնակից, ընդ որում, հարցվողների 50,2%-ը ծնողներից գաղտնի է պահում իր ՍԿԳՆ, իսկ 35,8%-ը որոշ ժամանակ անց ասել է նրանց այդ մասին և ընդամենը 3,3%-ն է, որ անմիջապես է դա կատարել (Աղյուսակ 11):

Երբ իմացան ծնողները

ՍԿԳՆ	Երբ իմացան ծնողները				
	Անմիջապես Չգիտեմ	Որոշ ժամանակ անց	Այլ պատասխան	Ընդամենը	
Գեյ	0	31	23	2	56
Լեսբուհի	0	11	9	3	23
Երկսեռական	4	59	24	3	90
Փոխգեղորդեր	3	2	14	2	21
Ընդամենը	7	103	70	10	190

Աղյուսակ 11

Այն հարցին, թե ընտանիքում ում են անձամբ ասել իրենց ՍԿԳՆ վերաբերյալ, հարցվողները տվել են ներուհիշյալ պատասխանները (Աղյուսակ 12): Պարզվում է, որ հիմնականում Լ.Գ.Ե.Փ համայնքի ներկայացուցիչները կա-

րող են վստահել իզական սեռի մտերիմներին, մասնավորապես՝ քրոջը և մորը:

ՍԿԳՆ

	Գեյ	Լեսբուհի	Երկսեռանի	Փոխգեղորդեր	Ընդամենը
Ոչ մեկին	17	16	40	4	77
Մայր	11	7	18	10	46
Հայր	2	0	7	0	9
Ընտանիքում Քույր	13	3	30	3	49
Եղբայր	11	0	9	0	20
Տատիկ	4	0	0	0	4
Այլ	19	0	8	2	29
Ընդամենը	56	26	85	16	183

Աղյուսակ 12

Ինչ վերաբերում է ընկերական շրջապատին, ապա պարզվում է, որ հարցվողներն այդքան էլ հակված չեն քաբքնել իրենց ՍԿԳՆ ընկերներից (Աղյուսակ 13)

ՍԿԳՆ

Ընկերական շրջապատ	ՍԿԳՆ				
	Գեյ	Լեսբուհի	Երկսեռական	Փոխգեղորդեր	Ընդամենը
Անենամոտ ընկերոջս	19	10	33	11	73
Որոշ ընկերներիս	32	21	39	9	101
Լ.Գ.Ե.Փ համայնքի ներկայացուցիչներին	16	9	23	14	62
Բոլորին	13	0	16	2	31
Ոչ մեկին	2	3	9	0	14
Այլ պատասխան	2	0	0	3	5
Ընդամենը	54	26	90	21	191

Աղյուսակ 13

Գրան հակառակ, աշխատավայրում շատերը հակված են թաքցնելու իրենց ՍԿԳՆ, հասկանալի պատճառով՝ վախենում են կորցնել աշխատանքը (Աղյուսակ 14):

	ՍԿԳՆ				
	Գեյ	Լեսբուհի	Երկսեռական	Փոխգեղոր	Ընդամենը
Աշխատակիցներից ոմանց	15	7	21	4	47
Անձնակազմի ղեկավարներից ոմանց	7	0	4	2	13
Բոլորին	10	3	7	2	22
Ոչ մեկին	18	14	49	2	83
Այլ պատասխան	4	0	0	5	9
Ընդամենը	52	24	77	13	166

Աղյուսակ 14

Կրթական հաստատությունում գրեթե նույն պատկերն է, քանի որ ուսանողները միշտ հաստատությունից հեռացվելու վտանգ են զգում: Ակնհայտ է, որ շատերը վստահում են իրենց համակուրսեցիներին՝ ելնելով ընկերական նկատառումներից, սակայն ոչ դասախոսական անձնակազմին (Աղյուսակ 15):

	ՍԿԳՆ				
	Գեյ	Լեսբուհի	Երկսեռական	Փոխգեղոր	Ընդամենը
Համակուրսեցիներից ոմանց	12	10	25	9	56
Ուսավանդող անձնակազմից ոմանց	14	0	12	2	28
Բոլորին	5	0	0	0	5
Ոչ մեկին	29	13	56	4	102
Այլ պատասխան	4	0	0	4	8
Ընդամենը	54	23	84	15	176

Աղյուսակ 15

Անվստահությունն անհամեմատ բարձր է հարևանների նկատմամբ, քանի որ նրանք տեղեկության տարածման, այսինքն՝ բամբասանքի, հիմնական հրահրողներն են: Սակայն կարևոր է նշել նաև, որ որոշ հարևաններ վստահության արժանանում են: Տրամաբանորեն բացատրելի է մեկ հանգամանք՝ 19 փոխգեղորներից 14-ը հարևաններից չի թաքցնում գեղորության ճանաչումը, քանի որ դա հիմնականում ակնառու է (Աղյուսակ 16):

	ՍԿԳՆ				
	Գեյ	Լեսբուհի	Երկսեռական	Փոխգեղոր	Ընդամենը
Ոմանց	19	4	17	14	54
Բոլորին	2	0	3	0	5
Ոչ մեկին	33	19	67	2	121
Այլ պատասխան	4	0	0	3	7
Ընդամենը	54	23	87	19	183

Աղյուսակ 16

Հաջորդ աղյուսակների շարքը նվիրված է այն հոգեբանական և իրավաբանական խնդիրներին, որոնց պարբերաբար բախվում են ԼԳԵՓ համայնքի ներկայացուցիչները: Հոգեբանական դժվարությունները գերիշխող են հենց ընտանիքում, որտեղ թվում է, թե անձը պետք է գտներ իր հոգեկան լիարժեք աջակցությունը (Աղյուսակ 17, 18, 19, 20, 21):

Ընտանիքում առաջացած խնդիրները					
		Հոգեբանական	Իրավաբանական	Հոգեբա/իրավաբանական	Ընդամենը
ՍպաՆ	Գեյ	26	0	2	28
	Լեսբուհի	10	0	8	18
	Երկսեռական	42	3	12	57
	Փոխգեներներ	10	0	0	10
	Ընդամենը	88	3	22	113

Աղյուսակ 17

Ընկերական շրջապատում առաջացած խնդիրները					
		Հոգեբանական	Իրավաբանական	Հոգեբա/իրավաբանական	Ընդամենը
ՍպաՆ	Գեյ	20	0	6	26
	Լեսբուհի	8	0	0	8
	Երկսեռական	29	3	0	32
	Փոխգեներներ	12	3	0	15
	Ընդամենը	69	6	6	81

Աղյուսակ 18

Ժամանցի վայրում առաջացած խնդիրները					
		Հոգեբանական	Իրավաբանական	Հոգեբա/իրավաբանական	Ընդամենը
ՍպաՆ	Գեյ	11	6	7	24
	Լեսբուհի	9	6	0	15
	Երկսեռական	24	19	4	47
	Փոխգեներներ	9	3	0	12
	Ընդամենը	53	34	11	98

Աղյուսակ 19

Աշխատավայրում առաջացած խնդիրները					
		Հոգեբանական	Իրավաբանական	Հոգեբա/իրավաբանական	Ընդամենը
ՍպաՆ	Գեյ	13	4	2	19
	Լեսբուհի	3	0	8	11
	Երկսեռական	12	8	5	25
	Փոխգեներներ	0	0	2	2
	Ընդամենը	28	12	17	57

Աղյուսակ 20

Կրթական հաստատությունում առաջացած խնդիրները					
		Հոգեբանական	Իրավաբանական	Հոգեբա/իրավաբանական	Ընդամենը
ՍպաՆ	Գեյ	7	9	2	18
	Լեսբուհի	3	0	7	10
	Երկսեռական	19	8	6	33
	Փոխգեներներ	12	2	0	14
	Ընդամենը	41	19	15	75

Աղյուսակ 21

Բժշկական հաստատությունում առաջացած խնդիրները					
		Հոգեբանական	Իրավաբանական	Հոգեբա/իրավաբանական	Ընդամենը
ՍպաՆ	Գեյ	16	3	2	21
	Լեսբուհի	14	0	0	14
	Երկսեռական	22	6	0	28
	Փոխգեներներ	12	5	0	17
	Ընդամենը	64	14	2	80

Աղյուսակ 22

Իրավաբանական հաստատությունում առաջացած խնդիրները					
		Հոգեբանական Իրավաբանական		Հոգեբա/իրավաբանական Ընդամենը	
Սկզբնական	Գեյ	11	16	4	31
	Լեսբուհի	0	6	0	6
	Երկսեռական	4	18	4	26
	Փոխգեղեցիկ	0	3	0	3
	Ընդամենը	15	43	8	66

Աղյուսակ 23

Հասարակական վայրերում առաջացած խնդիրները					
		Հոգեբանական Իրավաբանական		Հոգեբա/իրավաբանական Ընդամենը	
Սեռական կողմնորոշվածություն	Գեյ	28	2	14	44
	Լեսբուհի	8	3	0	11
	Երկսեռական	30	3	4	37
	Փոխգեղեցիկ	6	0	2	8
	Ընդամենը	72	8	20	100

Աղյուսակ 24

Այսպիսով, հստակ երևում է, որ համայնքի ներկայացուցիչները տարբեր վայրերում ամենից հաճախ ենթարկվում են հոգեբանական ճնշման, ինչը բերում է հոգեբանական անկայուն վիճակի առաջացման: Այնուհայտ է նաև, որ իրավունքների պաշտպանության դաշտում ԼԳԵՓ համայնքի ներկայացուցիչներն իրենց զգում են անապահով, հակառակ դեպքում նրանց հոգեբանական հիմնախնդիրները միանշանակ կմվագեն, քանի որ ապահովության զգացումը հոգեբանական կայուն իրավիճակի գրավականն է:

Հաջորդ աղյուսակներում տրված հարցերը հիմնականում ուղղված են ապագային և հիմնականում խոսում են հարցվողների ցանկությունների մասին:

Տարասեռական կողմնորոշվածություն ունենալու ցանկության հարցին նախընտրել են պատասխանել հարցվողներից 188-ը (Աղյուսակ 25):

		Պատասխաններ			
		Այո	Ոչ	Դժվարանում եմ պատասխանել	Ընդամենը
Սկզբնական	Գեյ	14	38	4	56
	Լեսբուհի	5	15	3	23
	Երկսեռական	26	38	26	90
	Փոխգեղեցիկ	10	7	2	19
	Ընդամենը	55	98	35	188

Աղյուսակ 25

Ինչ վերաբերում է ընտանիք կազմելուն, ապա այս դեպքում էլ հարցվողներից պատասխանել է 188-ը: Հետաքրքիր է, որ մեծամասնությունը նախընտրում է նույնասեռական ընտանիք ունենալ, իսկ երկսեռականները հիմնականում դժվարանում են պատասխանել (Աղյուսակ 26):

		Պատասխաններ			
		Տարասեռական	Նույնասեռական	Դժվարանում եմ պատասխանել	Ընդամենը
Սկզբնական	Գեյ	5	32	19	56
	Լեսբուհի	2	12	9	23
	Երկսեռական	28	24	38	90
	Փոխգեղեցիկ	8	11	0	19
	Ընդամենը	43	79	66	188

Աղյուսակ 26

Այն բարդ հարցին, թե կարևոր է արդյոք հարցվողների ապագա կամ ներկա երեխայի ՄԿԳՆ, ստացել ենք 190 վավեր պատասխան: Ընդամուր առմամբ, պատասխանները կիսվում են հավասար՝ 74-ը 77-ի դիմաց, իսկ մնացածը դժվարանում է պատասխանել:

Եզրակացություն

Համաձայն հետազոտության արդյունքների՝ Հայաստանում ԼԳԵՓ համայնքի ներկայացուցիչների մեծամասնությունը հիմնականում գտնվում է արտագաղութի վաղ փուլում, այն է՝ կասկածանքների շրջանում: Միայն եզակի թվով անհատներ են, որ հաղթահարել են արտագաղութի բոլոր փուլերը: Ընդհանուր առմամբ իրավիճակը բավականին քատոիկ է, քանի որ ԼԳԵՓ անհատները դիմում են արտագաղութի տարբեր իրավիճակներից ելնելով՝ ընտանեկան, սոցիալական, աշխատանքային, և, հիմնականում, արտագաղութի սուբյեկտի անհատական որակները կարևորելով: Որպես կանոն, Հայաստանում ԼԳԵՓ համայնքի ներկայացուցիչները բախվում են ՄԿԳՆ ոչ ինքնակամ բացահայտման հետ, ինչը խոչընդոտում է նրանց արտագաղութի փուլերի ներդաշնակ ընթացքին:

Ընտանիքում արտագաղութի հիմնական վստահության սուբյեկտները մայրը կամ քույրն է, ինչը վկայում է այն մասին, որ իզական գեները /սեռը/ Հայաստանում ավելի հանդուրժողական է և պատրաստակամ ԼԳԵՓ համայնքին որպես այդպիսին սատարելու: Չնայած այս հանգամանքին՝ ԼԳԵՓ անհատները հիմնականում հակված են գաղտնի պահել իրենց ՄԿԳՆ ընտանիքի անդամներից, քանի որ ավանդապաշտ տղամարդու կերպարը հատուկ է հայկական ընտանիքների մեծամասնությանը: Ավանդորեն, հայկական ընտանիքում ծնողները ներգրավված են երեխաների անձնական կյանքում, ինչը ԼԳԵՓ համայնքի ներկայացուցիչների համար դառնում է դրդապատճառ՝ կամ դիմել արտագաղութի, կամ հեռանալ ընտանիքից և ապրել ինքնուրույն կյանքով, ինչը լի է դժվարություններով և հոգեխռով հետևանքներով: Շատ դեպքերում առաջին տարբերակի

ընտրության հետևանք է դառնում այն, որ ծնողները, չհասկանալով այդ երևույթը, լինելով նույնավախ և կարծատիպերով կաղապարված, դուրս են վռնոտում ԼԳԵՓ անհատին՝ թողնելով նրան բախտի քմահաճույքին: Այդ իրավիճակում հայտնված անհատները դառնում են մեծ ռիսկային խումբ, երբեմն ստիպված են լինում մատուցել առևտրային սեքս ծառայություններ կամ զբաղվել թափառաշրջիկությամբ: Հաճախ նրանք չեն կարողանում շարունակել ուսումը կրթական հաստատությունում:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ԼԳԵՓ համայնքի ներկայացուցիչների մեծամասնությունը աշխատում է, քանի որ դա սեփական ազատությունը և անկախությունը ապահովելու միակ հնարավորությունն է: Սակայն դա չի նշանակում, որ աշխատավայրում նրանք կարողանում են հեշտությամբ հաղթահարել արտագաղութի այս փուլը: Աշխատավայրում ԼԳԵՓ անհատների վստահության մակարդակը գործընկերների կամ վերադասի նկատմամբ շատ ցածր է, քանի որ ՄԿԳՆ պատճառով նրանք միանշանակ կարող են հեռացվել աշխատանքից: Միայն այն ԼԳԵՓ անհատները, ովքեր աշխատում են սպասարկման, արվեստի կամ ժամանցի ոլորտում, համեմատաբար ավելի բացահայտ են դրսևորում իրենց աշխատավայրում:

Գրեթե նույն իրավիճակն է նաև կրթական հաստատություններում. մասնավորապես ԲՈՒՀ-երում ԼԳԵՓ անհատը խուսափում է կատարել արտագաղութ՝ կրթական հաստատությունից հեռացվելու վախից ելնելով: Սակայն համակուրսեցիների ավելի մտերմիկ շրջապատում շատերը նախընտրում են ազատ խոսել իրենց ՄԿԳՆ վերաբերյալ:

Ինչ վերաբերվում է ընկերական շրջապատին, ապա շատերը հակված են անցնել արտագաղութը մտերիմ ընկերական շրջապատում, առավել ևս, եթե այդ շրջապատում արդեն կան բացահայտ ԼԳԵՓ անհատներ: Հայաստանում սա այն միակ միջավայրն է, որտեղ ԼԳԵՓ անհատը հնարավորություն է ունենում ազատ արտահայտվել և դրսևորել իրեն: Չնայած այդ հանգամանքին, ԼԳԵՓ համայնքի մի մասը չի վստահում որոշ բացահայտ ԼԳԵՓ անհատներին, ինչը խոսում է ներքին նույնավախության առկայության մասին:

ԼԳԵՓ համայնքի ներկայացուցիչները տարբեր հասարակական վայրերում բախվում են նույնավախության տարրերի հետ, ինչը ամենալուրջ խոչընդոտն է հանդիսանում արտագաղութի ներդաստնակ գործընթացի համար: Համայնքի հիմնական մասը թաքցնում է իր ՄԿԳՆ տարբեր հասարակական վայրերում գտնվելու ժամանակ, քանի որ բախվում է ինչպես հոգեբանական ճնշման, այնպես էլ՝ իրավաբանական դժվարությունների և խնդիրների հետ:

Հայաստանում առանձնահատուկ տեղ է հատկացվում հարևանների ինստիտուտին: Այն կարելի է դիտարկել նաև որպես արտագաղութի հատրահարման փուլերից մեկը: Քանի որ հայկական մշակույթին բնորոշ է հարևանին՝ որպես «ընտանիքի անդամ» ընդունելը, ապա նրանք բավականին ներգրավված են լինում արտագաղութի գործընթացի մեջ: Եվ հետաքրքիր է այն հանգամանքը, որ փոխգեներները չեն թաքցնում իրենց ՄԿԳՆ և գեներային ինքնասարտահայտումը հարևաններից, քանի որ այս դեպքում իրականությունն ակնհայտ է:

Ժամանցի վայրերում ԼԳԵՓ համայնքը համեմատաբար ազատ է և բացահայտ, սակայն դա հիմնականում վերաբերում է այն վայրերին, որտեղ ի սկզբանե առկա է հանդուրժողական և ոչ խտրական վերաբերմունք:

Այսօրվա պատկերի համաձայն, ԼԳԵՓ համայնքի զգալի մեծամասնությունը ցանկություն ունի գոնե ժամանակավորապես հեռանալ Հայաստանից, ինչը վկայում է, որ հայկական նույնավախ և կարծրատիպերով հարուստ հասարակությունը արտագաղութի հնարավորություն նրանց չի տալիս:

Այս հետազոտությունը
հնարավորություն տվեց խորհելու
և՛ ԼԳԵՓ համայնքի ներկայացուցիչներին,
և՛ տարաստեակներին:
Բազում հարցերի մասին այստեղ չխոսվեց,
սակայն թվերը խոսում են ամենի մասին:

Քամինգ-աութի անձնական պատմություններ

Սամվել, 20 տարեկան

- Դեռ փոքր ժամանակ էի զգում, որ նման չեմ մյուսներին: Չէի հասկանում, թե ինչով եմ տարբերվում, բայց զգում էի, որ դա այդպես է: Հիշում եմ, որ շուրթերիս մոտ շրթներկն էին քսում, աչքերս ներկում էին, իսկ տատս ինձ կանացի ներքնաշոր էր հագցնում ու ասում, որ ես պետք է աղջիկ ծնված լինեի...

13 տարեկան էի, երբ մեր թաղում լուրեր տարածվեցին, որ մեր ընկերներից մեկը՝ Միքայելը, նույնասեռական է, ընդունված բառապաշարով ասած՝ «գոմիկ»: Բոլորը սկսել էին Միքայելին թարս նայել, խուսափել նրանից, բայց ինձ նա դուր էր գալիս: Դե գիտեի, որ «գոմիկները» սիրահարվում են տղաներին, ու դրա համար թաղի տղաների կողմից ծեծ էին ուտում, բայց ես «գոմիկներին» նորմալ էի վերաբերվում:

Դպրոցում էլ էի տարբերվում բոլորից: Առաջին հերթին՝ իմ հագնվելու ոճով, որ բոլորովին նման չէր մեր դասարանի տղաների ստանդարտ հագուկապին: Ես հովիտեյ տաբատներ էի հագնում, իսկ դա համարձակ քայլ էր, քանի որ այն ժամանակ միայն աղջիկներն էին այդպիսի տաբատներ հագնում: Տղաներն ինձ անուն էին «կպցրել»՝ հետևիցս «ղվիկ», «քիքիք» էին ասում... Սկզբում մտածում էի, որ նախանձում եմ ինձ, քանի որ ես լավ էի սովորում, բայց հետո հասկացա, որ ուղղակի նույնավախների գոհ եմ եղել... Դասարանցիներիցս տարբերվում էի նաև նրանով, որ աղջիկներին չէի սիրահարվում, աղջիկների համար կռիվ-մռիվ չէի սարքում: Ավելին ասեմ, մի հարևանուհի ունեինք, իմ նկատմամբ սկսել էր սեռական ոտնձգություններ անել, սիրահետում էր ինձ, բայց դա ինձ դուր չէր գալիս, նյարդայնացնում էր:

14 տարեկան էի, որ ինքս ինձ առաջին անգամ հարցրեցի, թե ինչու չեմ սիրահարվում աղջիկներին: Հետո սկսեցի գիտակցել, որ ինձ Միքայելն է դուր գալիս... Չեմ կարող ասել, որ սիրահարվել էի նրան,

բայց որ ուզում էի հենց նրա հետ սեռական հարաբերություն ունենալ, դա հաստատ կարող եմ ասել: Վախենում էի առաջին քայլն անել. թաղի տղաներն իմանային, գլուխս կջարդեին: Ու մի օր ես առանց այս ու այն կողմ ընկնելու հարցրեցի Միքայելին՝ «Դու զե՞ր ես»...

Մի խոսքով, իմ առաջին սեռական հարաբերությունը եղավ նրա հետ: Մի քանի օր հետո աղմուկ բարձրացավ, որ ես ու Միքայելը «քնել» ենք իրար հետ. նա էր հայտարարել: Ես ծեծեցի նրան, ու դրա մասին իմացավ մայրս: Մորս ներկայացրի, թե իբր Միքայելը սուտ լուրեր է տարածել: Բայց մայրս չհավատաց. ամեն ինչ հասկացավ: Առանց այդ էլ կասկածում էր, որ զեյ եմ, հարցնում էր՝ ինչու եմ հոնքերս հանում, աղջկա պես հագնվում, իսկ իմ ու Միքայելի պատմությունն ինչ հետո կարծես թե համոզվեց: Ասում եմ՝ «կարծես թե», որովհետև ինձ ոչ մի ավելորդ հարց չէր տալիս: Տասու էլ հարցեր չէր տալիս. երևի ոչ էլ պատկերացնում էր, որ իր թոռը կարող է զեյ լինել:

Դպրոցս ավարտեցի, ընդունվեցի ինստիտուտ: Ինստիտուտում էլ տարբերվում էի բոլորից, բայց ավելի ինքնավստահ էի՝ զգում, որովհետև արդեն ինքս ինձ համար շատ բան էի պարզել: Արդեն հստակ գիտեի, որ զեյ եմ, ու չէի տանջվում նրանից, որ աղջիկներն ինձ չեն հետաքրքրում: Սկսեցի հաճախ գնալ մեր քաղաքի, այսպես ասած, «զեյերի հավաքատեղին», որը հայտնի է «պլեշկա» անունով: Այստեղ շատերի հետ ծանոթացա: Այստեղ ինձ այլ անուն կնքեցին՝ կնոջ անուն դրեցին: Հիմա ես երկու անուն ունեմ. ընտանիքիս, կուրսեցիկներիս, գործընկերներիս ու անձանոթների համար «Մամվել» եմ, մտերիմներիս ու ընկերներիս համար՝ «Անիտա»: Ինստիտուտում, իհարկե, սկզբում թաքցնում էի, մինչև անգամ մի աղջկա հետ էի հանդիպում, որ կասկածներ չառաջացնեմ: Բայց հետո բոլորն էլ իմացան, նույնիսկ՝ դասախոսներս: Ես առաջվա դպրոցական տղան չէի, արդեն կայողանում էի ինքս ինձ պաշտպանել, բացատրել, որ եթե ես զեյ եմ, չի նշանակում, որ պատրաստվում եմ քնել մեր կուրսի բոլոր տղաների հետ: Շատ դժվար էր, բայց կամաց-կամաց ամեն ինչ իր տեղն ընկավ, հիմա ինձ շատերն են ընդունում հենց այսպիսին, ինչպիսին կամ:

Իմ սեռական կողմնորոշվածության մասին առաջին անգամ խոստովանեցի քեռուս: 17 տարեկան էի: Նա ինքն առաջինը խոսք բացեց այդ մասին, հարցրեց՝ զե՞ր եմ: Ես հաստատեցի: Դրանից հետո մայրս հայտնաբերեց իմ sms-ները, որ ստանում էի տղաներից: Մայրս միայն երկու բառ ասաց, հարցրեց՝ «Հա՞, փաստորե՞ն»: Ու վերջ: Մեր տան բոլոր խոսակցությունները, որ կարող էին իմ սեռական կողմնորոշվածությանը վերաբերել, դադարեցին: Մինչև հիմա էլ մենք երբեք այդ թեմային չեն անդադարեցնում, երբեք չի քննարկվում, թե ում հետ եմ հանդիպում: Մայրս էլ, տասու էլ ինձ շատ լավ են վերաբերվում: Բացի այդ՝ ես լավ աշխատանք ունեմ, ֆինանսապես անկախ եմ, կարծում եմ՝ դա էլ է օգնում, որ ինձ ինքնահստատված ու վստահ զգամ: Իսկ եթե որևէ մեկին դուր չի գալիս, որ ես զեյ եմ, խնդրեմ՝ դուռն այն կողմն է...

Մարինե, 26 տարեկան

Լավ չեմ հիշում, թե որ տարիքում եմ գիտակցել իմ սեռը, բայց 3-4 տարեկանում արդեն որոշել էի՝ մեծանամ, զինվոր եմ դառնալու ու գնամ պատերազմ: Միշտ տղաների հետ էի խաղում, «աղջկական» խաղերն ինձ չէին հետաքրքրում:

Դպրոցում ինքնամփոփ էի, դասարանցիներիս հետ լեզու չէի գտնում: 6-7-րդ դասարաններում նրանց ու իմ հարաբերություններն արդեն բավականին լարված էին: Դա հենց այն տարիքն է, երբ սեռային տարբերությունն ավելի ակնհայտ է դառնում. տղաներն սկսում են հետաքրքրվել աղջիկներով, սիրահարվել և այլն, իսկ աղջիկներն էլ փորձում են դուր գալ տղաներին, գաղտնի կոսմետիկա են օգտագործում, թիթիզ շորեր են հագնում, օրը մի սանրվածք են անում... Ես մնամ չէի մեր դասարանի աղջիկներին. մազերս միշտ կարճ կտրած, հագնվում էի տղաների պես, աշխատում էի նրանց շրջապատում լինել... Իմ մասին ասում էին, որ ես «տղայավարի» եմ, ու ես դա չէի էլ թաքցնում, միշտ անկեղծ եմ եղել: Ուզում էի, որ ինձ այդպիսին ընդունեն, ոչ թե փորձեն փոխել՝ իրենց անիմաստ խորհուրդներով: Հետո հասկացան, որ չեմ կեղծում, բայց սկսեցին խուսափել ինձնից՝ թե՛

աղջիկները, թե՛ տղաները: Ծանր էր հասկապես այն, որ տղաներն էլ էին սկսել ինձ հեռու վանել: Իհարկե, դասարանցիներիցս ոմանք ինձ ընկալում էին, ընդունում էին, բայց նրանք էլ թաքուն էին ինձ հետ ընկերություն անում, որ մյուսները չիմանան դրա մասին:

Առաջին անգամ լուրջ սիրահարվեցի 14 տարեկանում՝ իմ ամենամտերիմ ընկերուհուն՝ Լիկային: Մենք նույն բակից էինք: Երեքով էինք ընկերություն անում՝ ես, Լիկան ու նրա եղբայրը: Ես 24 ժամ ուզում էի, որ ես ու Լիկան միասին լինեինք, չբաժանվեինք: Բայց Լիկան ինձնից փոքր էր, ու վախենում էր, որ մեր ոչ սովորական ընկերության մասին կիմանան եղբայրը, ծնողները: Առաջին սեռական փորձս Լիկայի հետ է եղել: Չեմ կարող ասել, թե Լիկան լեսբուհի էր, բայց նա էլ էր ուզում ինձ հետ լինել, անգամ խանդում էր ինձ: Մեր հարաբերությունները շարունակվեցին մոտ 4 տարի. ժամանակ առ ժամանակ գաղտնի հանդիպում էինք: Իհարկե, հետո ամեն ինչ «բացահայտվեց»: Ու ես կորցրեցի ընկերոջս՝ Լիկայի եղբորը. նա այդպես էլ չկարողացավ ներել իմ ու քրոջ հարաբերությունները: Ես կորցրեցի նաև Լիկային: Մայրն էլ միջամտեց, ի վերջո ամուսացրեց Լիկային և ուղարկեց արտասահման: Դրանից հետո ես նրա մասին ոչինչ չեմ լսել: Գիտեմ միայն, որ խաղաղ ապրում է իր ընտանիքի հետ: Մինչև հիմա էլ կարծում եմ, որ նա, այնուամենայնիվ, լեսբուհի չէր:

Շրջապատում ոչ ոք բացահայտորեն չէր հարցնում՝ լեսբուհի՞ եմ, թե՞ ոչ: Բայց բավական էին: Այդ շրջանում շատ շատերը հեռացան ինձնից, բայց կային մարդիկ, ովքեր հասկացան ինձ, մնացին իմ կողքին ու մինչև հիմա էլ իմ ընկերներն են: Հիմա ես ոչ ոքի հեշտությամբ ինձ մոտ չեմ թողնում, իսկ աղջիկներին աշխատում եմ հեռավորության վրա պահել:

Մայրս միշտ էլ նկատել է իմ ոչ սովորական վարքագիծը: Փոքր ժամանակ փորձում էր ինձ շրջագցեստ հագցնել, բայց ես դիմադրում էի, լացում էի, չէի թողնում: Հետո մայրս սկսեց այլևս չպնդել: Երևի կարծում էր, որ դա ընդամենը մանկական կամակորոպություն էր: Բայց ես կամակորոպում չէի անում, ես այդպիսին էի: Այդպես էլ շրջա-

զգեստ չհագա ու չեմ էլ պատրաստվում հագնել: Անգամ Վերջին գանգի օրը բոլոր աղջիկները բեմ բարձրացան շրջագցեստով, իսկ ես տղաների պես՝ սև կոսալուծով ու տաբատով: Իմ սիրահարված տարիներին մայրս զգում էր, որ իմ ու Լիկայի հարաբերությունները միայն ընկերկան չէին... Ես որքան էլ փորձեի թաքցնել, միևնույն է՝ մայրս զգում էր: Բայց ոչինչ չէր հարցնում, հույս ուներ, որ կանցնի: Մի օր, երբ իմ ու Լիկայի միջև կոնֆլիկտ էր եղել, ու ես ծանր դեպրեսիա էի տանում, մայրս հարցրեց, թե ինչ է կատարվում ինձ հետ: Ես անկեղծորեն խոստովանեցի, ամեն ինչ պատմեցի. իմաստ չունեի թաքցնել: Մայրս հուզվեց, լաց եղավ... Սկսեց համոզել, որ սա անցողիկ հրապուրանք է, որ վաղ թե ուշ կամուսանան ու լավ ընտանիք կունենան: Ես բացատրեցի մորս, որ տղամարդու հետ ամուսանալ չեմ կարող: Ես մայրական բնագոյ չունեմ, չեմ կարող մայրանալ: Պատրաստ եմ երեխայի համար հայր լինել, բայց ոչ՝ մայր: Կուզեի իմ սիրած կնոջ հետ ապրել, երեխա մեծացնել. սա է իմ պատկերացրած ընտանիքը: Եվ կուզեի, որ ամուսանայի իմ երկրում՝ Հայաստանում, ոչ թե փախնեի այս հասարակությունից ու մեկ այլ տեղ փնտրեի իմ երջանկությունը...

Մայրս հասկանում է ինձ և երբեք այս թեմայով վեճեր չեն լինում: Ես շատ շնորհակալ եմ, որ մայրս ինձ ընդունում է, չի փորձում ճնշել, համոզել, պարտադրել... Նա ասում է, որ իմ երջանկություն է ուզում՝ ինչպիսին էլ այն լինի: Կարծում եմ, այս հարցում մեծ դեր ունի այն, որ մայրս միշտ էլ առաջադեմ հայացքներ է ունեցել, երբեք հայկական «աղաթավոր» կարծրատիպերի գերին չի եղել:

Ես 6 տարեկան էի, որ ծնողներս բաժանվեցին: Հորս հետ առնչություն չունեմ, մեր հարաբերությունները պաշտոնական են, առիթից առիթ եմք հանդիպում, այն էլ՝ կարճ ժամանակով: Չգիտեմ՝ տեղիս՞ էլ է այն մասին, որ ես լեսբուհի եմ, բայց կարծում եմ, որ եթե իմանար՝ ինձ կընդուներ, որովհետև ինքն էլ ազատ հայացքների տեր մարդ է:

Չգիտեմ՝ ինչ կլինի հետո: Եթե գտնեմ այն կնոջը, ում հետ պատրաստ կլինեմ կյանքս կապել, կամուսանան: Ամեն դեպքում՝ կփորձեմ: Կփորձեմ երջանիկ լինել:

Ստորագրված է տպագրության՝ 19.05.2010թ.:

Չափսը՝ 70 x100 1/16:

Ծավալը՝

Տպաքանակ՝ 500: